629.113
S-99

1933

30 JUL 2010

ՀՍԽՀ—Հ. Ժ. Կ. ԱԳՐՈ-ՏԵԽ-ՊՐՈՊ

# ՏՐԱԿՏՈՐՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

*(ՀՍԽՀ-ի Հողժողկոմատի կոլեգիայի 1933 թ. ապրիլի 22-ի որոշումը)*

1933 Երևան

2004-38

21.03.2014

Գյուղհրատի տպարան
Պատվեր 441
Գլավլիտ 8772 Տիրաժ 1200

629.113 ագ.
Տ-99

# ՏՐԱԿՏՈՐՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**ԽՍՀՄ-ի Հողժողկոմատի կոլեգիայի 1933 թ. ապրիլի 22-ի վորոշումը**

*Տրակտորը լավագույն ձևով պահպանելու նպատակով,—վորպեսզի դրանով ապահովված լինի նրա ավելի յերկարատև աշխատանքը և գյուղատնտեսական կարևորագույն կամպանիաները կատարվեն կառավարության և կուսակցության սահմանած ժամկետներին՝ կապելով այդ վորակական բարձր ցուցանիշների հետ,—այլև նկատի ունենալով, վոր ներկայումս մեքենատրակտորային կայաններում և խորհտնտեսություններում գոյություն ունեցող դաշտային նորոգման սիստեմը չի ապահովում մեքենա-տրակտորային պարկի աշխատունակ վիճակը և առաջ է բերում խոշոր պարապուրդներ, ԽՍՀՄ-ի Հողժողկոմատի կոլլեգիան վորոշում է.*

*1. Պարտավորեցնել ԽՍՀՄ-ի Հողժողկոմատի սիստեմի մեջ մտնող բոլոր ՄՏ կայաններին և խորհտնտեսություններին տրակտորները վորոշ ժամանակ աշխատելուց հետո նրանց խնամելու, կանոնավորելու, շտկելու, ինչպես ամբողջ տրակտորը, այնպես էլ նրա առանձին մեխանիզմները ստուգելու վերաբերյալ կատարել մի շարք ոպերացիաներ:*

*Այդ բոլոր ոպերացիաները պետք է կատարվեն նախապես մշակված պլանով, վորը կազմված է տվյալ մարկայի տրակտորների համար ընդունված տարե-*

կան զուտ աշխատանքի ժամերի, առանձին դետալների ծառայության միջին ժամկետների, գյուղատնտեսական աշխատանքի հիմնական տեսակների կատարման օրացուցային ժամկետների, առանձին տրակտորների աշխատունակության, հողային պայմանների հիման վրա և այլն։

3. Հաստատել Ստալինգրադի Խարկովի տրակտորների գործարանների տրակտորների տեխնիկական խնամքի վերաբերյալ 1933 թ. համար մշակված օրինակելի ժամանակավոր կանոններն ու կանոնադրությունը։

4. Տեխնիկական խնամքի վերաբերյալ սույն օրինակելի կանոնները պետք է անմիջապես կիրառվեն տնտեսություններում, իսկ տեխնիկական խնամքի վերաբերյալ մինչև այժմ գոյություն ունեցող կանոնները վերանում են։

5. Հերթական տեխնիկական խնամքի չյենթարկված տրակտորները բանեցնելն արգելվում է։ Տեխնիկական խնամքի կանոնները ժամկետին չկատարելու համար պատասխանատու յեն՝ բրիգադավարը, ՄՏԿ-ի ավագ և շրջիկ մեխանիկները և խորհտնտեսության դիրեկտորի տեխնիկական մասի տեղակալը։

Տեխնիկական խնամքի-կատարման պատասխանատվությունն ամբողջովին ընկնում է (խորհտնտեսության մեջ և ՄՏԿ-ում) անձնապես ՄՏԿ-ի և խորհտնտեսությունների դիրեկտորների տեխնիկական մասի տեղակալների վրա։

6. Գյուղմատնորոգմիությունը (Սայուզսելխոզռեմոնտը—գյուղատնտեսական գործիքների մատակարարման և նորոգման միությունը) Գյուղմատնորոգմիության տեղական բաժանմունքների միջոցով հանրապետական տրակտոր կենտրոնից և տրեստներից ստացված հայտերի հիման վրա պետք է մատակարարման պլաններում նախատեսի տրակտորների նկատմամբ տեխնիկական խնամք ունենալու համար անհրաժեշտ պահեստի մասերը, նյութերը, գործիքները, տեխնիկական խնամքը լիակատար ապահովելու։



7. Հանրապետական Հողժողկոմատներին տրակտորկենտրոնի հետ միասին իրենց ներկայացուցիչներին ուղարկել ՄՏԿ-երն ու խորհտնտեսությունները, հանձնարարելով նրանց տվյալ խորհտնտեսության կամ ՄՏԿ-ի տեխնիկական աշխատողների հետ միասին տվյալ տնտեսության պայմաններում կազմել տեխնիկական խնամքի պլանը, վերջինս ավագ տրակտորիստների, ղեկավորների (рулевой) և բրիգադավարների արտադրական խորհրդակցություններում վերամշակման յենթարկելով։

8. Գյուղկոլտնտհրատը—ընկ. Բերնացյուկի պատասխանատվությամբ, պետք է հինգ օրվա ընթացքում հրատարակի՝ «1933 թվի տեխնիկական խնամքի օրենքներն ու կանոնները»։

ՍՍՌՄ Միության Հողժողկոմի տեղակալ

Ա. ՄՈՒՐԱԼՈՎ

# ՏՐԱԿՏՈՐՆԵՐԻ 1933 ԹՎԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԿԱՏԱՐՈՒՄԸ

## Ժամանակավոր կանոնադրություն

1. Տրակտորային պարկի աշխատունակությունը, նրա մաքսիմալ բեռնվածությունը և գյուղատնտեսական աշխատանքների ամբողջ ընթացքում նրա լավագույն օգտագործումն ապահովելու հիմնական պայմանը տեխնիկական խնամքի ճիշտ կազմակերպումն է։

2. Տրակտորների տեխնիկական սպասարկման համար մինչև այժմ գոյություն ունեցող սիստեմը յերբեք չի կարելի բավարար համարել, վորովհետև նա գլխավորապես զբաղվել է կոտրված և մաշված մասերը շտկելով և վոչ թե դրանց առաջը նախապես առնելով։

Տրակտորիստների անբավարար վորակը, բրիգադավարի կողմից լավագույն հսկողության բացակայությունը, ինչպես և ՄՏԿ-ի և խորհտնտեսությունների տեխնիկական անձնակազմի շարքերը սողոսկած դասակարգային թշնամու հաճախակի ու դիտավորյալ վնասարար աշխատանքն այն հետևանքն են ունեցել, վոր տրակտորի մեխանիզմներից վորևե մեկը ժամանակին չի ձգվել կամ կանոնավորվել, աննշան թերությունները չեն վերացվել և մաշված մասերը ժամանակին չեն փոխվել, վորով հետագա աշխատանքի ժամանակ առաջացել են մի շարք մասերի ծանր վնասվածքներ և մեծ մասամբ վերջացել են տրակտորների (մոտորի արագությունների տուփի և այլն) ամբողջ ագրեգատի ավերումով։



Այդպիսի տրակտորները յերկար ժամանակով նորոգության տրվելով, ընթացիկ գյուղատնտեսական կամպանիայի պլանը վիժում է և տրակտորային պարկի օգտագործման արժեքը չափազանց բարձրանում է։

Վերոհիշյալ թերությունները վերացնելու նպատակով ԽՍՀ Միության Հողժողկոմատը բոլոր ՄՏԿ-ին և խորհտնտեսություններին առաջարկում է տրակտորի տեխնիկական խնամքի այնպիսի մի սիստեմ կազմակերպել՝ վորով գյուղատնտեսական դաշտային աշխատանքների ամբողջ ժամանակաշրջանում ապահովված լինի նրա անընդհատ աշխատանքը։

Տեխնիկական խնամքի նոր սիստեմը պետք է հիմնված լինի հետևյալ սկզբունքի վրա. անկախ այն հանգամանքից, թե տրակտորի աշխատանքում վորևե դեֆեկտ է նկատվում կամ՝ վոչ, աշխատանքի վորոշ քանակի ժամերից հետո նրան պետք է կանգնեցնել և տրակտորիստը մեխանիկի կամ բրիգադավարի հսկողությամբ պարտավոր է կատարել մի շարք տեխնիկական օպերացիաներ՝ տրակտորը պահպանելու, նրա կոտրվելու կանխելու մասերը վաղաժամ մաշվելուց ապահովելու և նրա ծառայության ժամերը յերկարացնելու ուղղությամբ.

Բոլոր ՄՏԿ-ը և խորհտնտեսությունները տրակտորային պարկի տեխնիկական խնամքի սիստեմը պետք է կառուցեն հետևյալ ցուցումների հիման վրա։

### Ա. ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

1. Նկատի ունենալով տրակտորի առանձին մասերի և մեխանիզմների վիճակը, կատարվող աշխատանքների բնույթը, կլիմայական և աշխարհագրա-

կան պայմանները, ինչպես և նախորդ նորոգման կատեգորիաները, յուրաքանչյուր տրակտորի համար կազմվում է տարեկան օրացուցային աշխատանքային պլան և տեխնիկական խնամքի գրաֆիկ, առաջնորդվելով օպերացիաների հաջորդականության և անվանացանկի վերաբերյալ կից կանոններով։

2. Ստալինգրադի և Խարկովի տրակտորների աշխատանքի միջին պայմանների համար կազմված «Օրինակելի կանոնները» պետք է հիմք ծառայեն բոլոր մյուս մարկայի տրակտորների համար՝ նկատի ունենալով յուրաքանչյուր մարկայի առանձնահատկությունները։ Օրինակ, Ստալինգրադի և Խարկովի տրակտորների համար մշակված կանոնները խիստ մոտիկ են 10 20, 15 35, 22 36 Ինտեր տրակտորներին։

3. ՄՏԿ-ում բոլոր տրակտորների տեխնիկական խնամքի տարեկան պլանը կազմում է դիրեկտորի տեխմասի օգնականը (ավագ մեխանիկը), խորհտնտեսության մեջ՝ ինժեներմեխանիկատորը և հաստատում է դիրեկտորը։

4. Տեխնիկական խնամքի տարեկան պլանի հիման վրա ՄՏԿ-ի մեխանիկը կամ բաժանմունքի տեխմասի դիրեկտորի օգնականը կազմում են յուրաքանչյուր հողամասի կամ բաժանմունքի տրակտորների խնամքի կատարման օրացուցային պլանը։

Այս պլանները հաստատում է ՄՏԿ-ի կամ խորհտնտեսության դիրեկտորը, իսկ պլանների քաղվածքը ստորագրությամբ տրվում է բրիգադավարին կամ խորհտնտեսության բաժանմունքի մեխանիկին պարտադիր կերպով կատարելու համար։

5. Ելնելով տարեկան օրացուցային պլանից, 



կազմում են արհեստանոցների (Մ.Տ. կայանների և ՄՏ արհեստանոցների) բեռնվածության պլանը տրակտորների նորոգման համար պահանջվող պահեստամասերի և նյութերի մատակարարման պլանը։

6. Տեխնիկական խնամքը և նորոգումը անցկացնելու տարեկան պլանը ՄՏԿ-ն ուղարկում է հանրապետական տրակտորկենտրոնին, իսկ խորհտնտեսությունը՝ տրեստին։

## Բ. ԽՆԱՄՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

1. Տրակտորի ամսական տեխնիկական խնամքը, տրակտորն աշխատանքի նախապատրաստելու և յուղը փոխելու հետ կապված 60 ժամը մեկ կատարվող լրացուցիչ օպերացիաներ, ինչպես և 6 օրը մեկ՝ հանգստի օրերին կատարվող խնամքի վերաբերյալ օպերացիաները, պետք է տեղի ունենան դաշտային պարագաներում։

2. 120 ժամվա աշխատանքից հետո, տեղի ունեցող օպերացիաներ,—որոնք նախատեսված են խնամքի վերաբերյալ օրինակելի կանոններով,—կատարվում են քանդված տրակտորը կեղտից փոշուց ամբողջովին պաշտպանող ծածկված շարժական արհեստանոցներում։

3. Մոտորը 600 ժամ աշխատելու ընթացքում քանդելու չենթակա չէ, բացառությամբ միմիայն կարթերը հանելու կամ լյուկերը բացելու հետ կապված սռնակալները ձգելու դեպքերից։

Աշխատանքի ժամանակ յերևան յեկած այս կամ այն պատճառներով տրակտորը սահմանված ժամկետից վաղ քանդելու անհրաժեշտության դեպքում, մո-

տորը քանդում են միմիայն շրջանի մեխանիկի թույլտվությամբ, իսկ նրա բացակայության դեպքում ՄՏԿ-ի դիրեկտորի տեխնիկական մասի օգնականի թույլտվությամբ։ Այդ դեպքում կազմվում է մոտորը վաղաժամ քանդելու անհրաժեշտության վերաբերյալ ակտ և կատարված նորոգությունը նշանակվում է պասպորտում։

4. 240 ժամվա աշխատանքից հետո կատարվող օպերացիաները և 600 ժամից հետո կատարվող ընթացիկ նորոգումը տեղի յեն ունենում շրջանի կամ խորհտնտեսության բաժանմունքի արհեստանոցներում։ Յեթե շրջանային արհեստանոցը աշխատող տրակտորներից 10 կիլոմետր տարածությունից ավելի հեռու յե գտնվում, ընթացիկ նորոգումը պետք է կատարել շրջիկ արհեստանոցներում, վորոնց տիպը ներկա մոմենտում ԽՍՀՄ-ի Հողժողկոմատում մշակվում է։ Իսկ ժամանակավոր շրջիկ արհեստանոցը կարող է գտնվել մոտակա կոլտնտեսության մեջ (2—3 կիլոմետրից վոչ հեռու) մի այնպիսի փակ շենքում, ուր քանդված տրակտորը կեղտից և փոշուց պաշտպանված է։

5. Ջոկատը մի այլ կոլտնտեսության տերիտորիա անցնելիս շրջիկ արհեստանոցը կարող է փոխադրվել այդ կոլտնտեսության մեջ նախապես պատրաստված շենքը։

6. Տրակտորների միջակ նորոգությունը 1200 ժամվա աշխատանքից հետո կատարվում է այդ նպատակի համար հատկապես հարմարեցված ՄՏԿ-ի կենտրոնական արհեստանոցում։



## Գ. ՊԱՀԵՍՏԻ ՄԱՍԵՐԻ, ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՅԵՎ ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄԸ

Տեխնիկական խնամքի և նորոգման պլանները ժամանակին կատարելը ուղղակիորեն կապված է աշխատող տրակտորները պահեստի մասերով, գործիքներով ու նյութերով լիակատար և անընդհատ կերպով ապահովելու հետ։

1. Դիրեկտորների տեխնիկական մասի օգնականները պարտավոր են տրակտորները մեկ ամսվա անընդհատ աշխատանքի համար ապահովել անհրաժեշտ պահեստի մասերով։

ՄՏԿ-ի և խորհտնտեսության պահեստները շրջաններին և բաժանմունքներին պահեստի մասեր և նյութեր բաց են թողնում տեխնիկական խնամք կատարելու գրաֆիկի համեմատ և փոխելու յենթակա մաշված մասի փոխարեն։

## Դ. ԲԱՆՈՒԺ

1. Տեխնիկանան խնամքը թե վորակապես և թե ժամկետներին պատշաճ կերպով կատարելը գլխավորեն կախված է յուղած կայլերը ճիշտ կերպով բաշխելուց։

Խնամքի տարեկան գրաֆիկը կազմելիս ՄՏԿ-ն և խորհտնտեսությունները պարտավոր են ճիշտ կերպով հաշվի առնել բանուժի պահանջն ըստ վորակի, նկատի առնելով սարքավորման քանակն ու վիճակը, շրջանների կամ բաժանմունքների հեռավորությունը և ջոկատների քանակը։

ՄՏԿ-երի շրջանների և խորհտնտեսությունների բաժանմունքների արհեստանոցներում ընթացիկ նո-

րոգությունը կատարում է մշտական նորոգող բրիգադը՝ բրիգադային մեթոդով։ Խորհտնտեսությունների և ՄՏԿ-երի կենտրոնական արհեստանոցներում միջակ նորոգությունը նույնպես կատարվում է բրիգադային մեթոդով։

ՄՏԿ-երի շրջանային արհեստանոցների և խորհտնտեսությունների բաժանմունքների 10 կիլոմետր տարածությունից ավելի հեռու գտնվող տրակտորների ընթացիկ նորոգությունը բրիգադը կատարում է ծածկված շրջիկ և հատկապես սարքավորված արհեստանոցներում։

## 3Ե. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԽՆԱՄՔԸ ԺԱՄԱՆԱԿԻՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1. Ամբողջ ՄՏԿ-ում տրակտորների տեխնիկական խնամքի կանոնները վորակավոր կերպով և ժամանակին կատարելու պատասխանատվությունն ընկնում է դիրեկտորի տեխնիկական մասի օգնականի վրա, իսկ խորհտնտեսության մեջ՝ ինժիներ-մեխանիզատորի վրա։

2. ՄՏԿ-ի և խորհտնտեսության բրիգադներում խնամքի կանոններ ժամանակին կատարելու պատասխանատվությունն ընկնում է բրիգադավարի վրա։

3. Շրջանային արհեստանոցներում ընթացիկ նորոգության վորակի և ժամանակին կատարելու համար պատասխանատու յե շրջանի մեխանիկը, իսկ խորհտնտեսության բաժանմունքներում՝ բաժանմունքի մեխանիկը։

4. Շրջիկ արհեստանոցներում վորակի և ժամկետների համար պատասխանատու յե բրիգադավարը։

5. ՄՏԿ-ում և խորհտնտեսություններում վորավավոր կերպով և ժամանակին միջակ նորոգություն կատարելու պատասխանատվությունն ընկնում է արհեստանոցների վարիչների վրա։



## ՍՏԱԼԻՆԳՐԱԴԻ ՅԵՎ ԽԱՐԿՈՎԻ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ ՏՐԱԿՏՈՐՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՈՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ

| ՈՊԵՐԱՑԻԱՆԵՐԻ ԱՆՈՒՆԸ | Խնամքի համար պահանջվող ժամանակը ժամ բոպ. (օրինակելի) | | | Պահանջվող պահեստի մասերը | | ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ |
|---|---|---|---|---|---|---|
| | Մեխանիկ | Փականագործ | Տրակտորիստ | Կատալոգի № | Քանակը | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| № 1 Տրակտորի յուրաքանչյուր հերթափոխի խնամքը (10 ժամը մեկ անգամ) | | | | | | |
| Հերթափոխի տրակտորիստը բրիգադավարի ղեկավարությամբ կատարում է<br>ա. միաժամանակ<br>Տրակտորիստի ինֆորմացիան տրակտորի աշխատանքի մասին հերթափոխի ժամանակ | | | | | | |
| 1. Տրակտորն ընդունելը, նրան արտաքուստ կեղտից և յուղից մաքրելը առանձին մեխանիզմները մագնետոն, դի- | | | | | | Կատարում է տրակտորիստը աշխատանքի նախապատրաստման վայ- |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| նամո-մեքենան, լույսն ու 1 արբյուտատորները—կեղտից մաքրելը . . | — | — | 10 | — | — | ըում տրակտորը յերկրորդ ներթափոխին հանձնելիս: |
| 2. Տրակտորի արտաքին ամրությունների—շարժիչի և շրջանակի միացման, մագնետոյի, ղեկայունի (рулевая колонка), լարելու բռնակի (заводная ручка), ղեկավարման քարշի, ռադիատորի, քամհարի փոկի, ոդամաքրիչի, առջևի սռնակի քանդիչի (распорка), կրնկատակի подънятник), կխառռնակների պատյանների, խթանների (шпора), գերկայի յուղամանների և այլն ստուգումը . . . . . . . . . . . . . . | — | — | 15 | — | — | |
| 3. Ոդամաքրիչի և կարբյուրատորի միացման ամրությունն ստուգելը . | — | — | 2 | — | — | |
| 4. Ֆիլտրի և վառելանյութի զտման անոթների զննությունն ու լվանալը . . . . . . . . . . . . . | — | — | 5 | — | — | Վառելոնյութի զտման անոթի ծորակը բացել և չհոսելու կամ հոսը թույլ լինելու դեպքում անոթը և ֆիլտրը մաքրել: |
| 5. Առջևի անիվների սռնակալների և առջևի սռնակի մատի վիճակի ըստուգումը (առանց քանդելու) . . | — | — | 5 | — | — | |



| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 6. Տրակտորը և առանձին մեխանիզմները յուղելը համաձայն գործարանային հրահանգի, ոդամաքրիչի յուղը փոխելը, տրակտորի մեջ ջուր և վառելանյութ լցնելը և շարժիչի խորշերում լցված յուղի մակարդակը ստուգելը: | — | — | 30 | — | — | Կատարում և տրակտորիստը աշխատանքի նախապատրաստման վայրում բրիգադավարի հսկողությամբ և ղեկավարությամբ: Քամի յեղանակին վառելանյութը ավտոմատ լցանակով լցնելիս պետք է հետևել, որ ցնցուղները ու դույլերը լինեն մաքուր: Լցնելիս՝ ձագարը քամու հոսանքից պետք է պաշտպանել Կարտերում լցված յուղի մակարդակը ստուգելիս ստուգիչ ծորակների կեղտը անցքերի բերակ յերկաթալարով մաքրել: |
| 7. Մխոցային մատի ամրացման (стонорный) գնդերիթների (болт) և շարժառևային սռնակալների վիճակը գնդիչ լուկերի միջով ստուգելը: . . . . . . . . . . . . . . | 10 | — | — | — | — | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 8. Արագությունների տուփի, կարտերի բաց թողնող խցանների, դիֆերենցիալի և ստուգիչ յուղածորակների ստուգումը . . . . . . . . . . . | — | — | 3 | — | — | Այս օպերացիան կատարում է բրիգադավարը կամ նրա օգնականը խմբի կանգառնելու տեղում: Ուշի ուշով հետևել, որ մասի ամրացման գնդերիթները և շարժաթևային առանցքները ստուգելիս կարտերի մեջ կեղտ չլինի կատարում է տրակտորիստը: Ստուգելիս ստուգիչ յուղածորակների անցքերը պետք է բարակ լարկաթալարով մաքրել: |
| 9. Շարժիչը գործի գցելը, կանոնավորելն ու լսելը և տրակտորի արտաքին զննությունը . . . . . . | 5 | — | 5 | — | — | |
| 10. Կցովի մեքենաների և կցորդների տեխնիկական վիճակը ստուգելը, յուղելը ու նրանց կանոնավորելը: | — | — | 30 | — | — | Կատարվում է բրիգադավարի կամ նրա օգնականի մասնակցությամբ: |
| **Ընդամենը** | 15 | — | 1—55 | — | — | |

2004
38

2568

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Բ. աշխատանք ժամանակ | | | | | | |
| 1. Ռադիատորի մեջի ջուրը և վառելանյութը լրացնելը, յուղի մակարդակի ստուգումը: . . . . . . . . | — | — | 10 | — | — | Կատարվում է ակոսում վառելանյութ, յուղ և ջուր բերելով: |
| 2. Աշխատանքի ժամանակ տրակտորի վիճակի ստուգումը . . . . . . . | 05 | — | — | — | — | Կատարվում է բրիգադավարը կամ նրա օգնականը: |
| **Ընդամենը . . .** | 05 | — | 10 | — | — | |

Տրակտորի ընդհանուր պարապուրդը 10-ժամյա աշխատանքի հերթափոխության ընթացքում կազմում է 2 ժամ:

| ՈՊԵՐԱՑԻԱՆԵՐԻ ԱՆՈՒՆԸ | Խմբի համար պահանջվող ժամանակը (րոպեներով) | | | Պահանջվող պահեստի մասեր | | ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ |
|---|---|---|---|---|---|---|
| | Մեխանիկ | Փականագործ | Տրակտորիստ | № ըստ կատալոգի | Քանակը | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| **Ամեն հերթափոխի ոպերացիաներին լրացուցիչ կերպով կատարվում են՝ տեխնիկական խնամք №2** | | | | | | |
| 1. Շարժիչի կարտերում յուղը ամբողջովին փոխելը, լցանցքի ֆիլտրը լվանալը կատարվում է ոչ պակաս քան աշխատանքի յուրաքանչյուր 60 ժամը մեկ անգամ։ Յուղը թափում են մոտորը կանգնելուց անմիջապես հետո: . . . ա) Լցանցքի ցանցը լվանալ։ բ) Ջնջիչ յուղերի միջից կարտերը սրսկիչով (шприц) լվանալը։ | | | 20 | | | Հետևեցեք, որ ամաններ-դույլերը, ձնցուղները լինեն բացարձակապես մաքուր։ Քամի յեղանակին յուղը փոխելիս լցանցքը քամուց և փոշուց պաշտպանել։ Բանեցրած յուղն անպայման լցնել հատուկ ամանի մեջ։ Յուղը լցնելուց առաջ լցանցքի ցանցը համաձայն ՍՍՀՄ-ի Հողժողկոմատի հրահանգի լվանալ չոր յեղանակին աշխատելիս ամեն 40 ժամը մեկ անգամ, իսկ խոնավ յեղանակին, ամեն 60 ժամը մեկ անգամ։ |
| 2. Օդամաքրիչի ֆիլտրը մաքրելը . . | — | — | 5 | — | — | |
| **Ընդամենը** | — | — | 25 | — | — | |

Տեխնիկական խնամք № 3

II. Տրակտորի պարբերական զննությունը կատարվում է ոչ պակաս քան աշխատանքի 6 օրը մեկ անգամ. (կատարվում է հանգստի օրերին)

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Մոմերը մաքրելն ու լվանալը, էլեկտրոդների արանքները կանոնավորելը և կայծն ստուգելը . . . | 2 | — | 12 | — | — | Այս բոլոր ոպերացիաները կատարում է մեխանիկը տրակտորիստի օգնությամբ խմբի կանգ առնելու տեղում։ |
| 2. Վառելու և լուսավորության թելերի մեկուսացման ստուգումը . . . | 4 | — | — | — | — | |
| 3. Վառելանյութի ֆիլտրը, յերեքժակիները (тройник) և նման սիստեմի խողովակները մաքրելն ու լվանալ։ | — | — | — | — | — | |
| 4. Յուղման ստուգումը՝ համաձայն գործարանային հրահանգի . . . | 5 | — | — | — | — | |
| 5. Ծփանների արանքները (зазоры) ստուգելն ու կանոնավորելը . . . | 12 | — | — | — | — | |
| **Ընդամենը** . . . | 23 | | 17 | | | |

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԽՆԱՄՔ № 4

**Մոտավորապես յուրաքանչյուր 120 ժամը մեկ անգամ (կատարվում է հանգստի օրերին)**

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Շարժաթևային սռնակալները ձգելը ստուգման յենթարկելով պահպանակների (вкладыш) նստվածքն ու բաբիտի վիճակը և յուղանցքները ու սռնարասնը լցվելուց մաքրելը, շարժաթևային ու ամրացման գնտեբեռների վիճակն ստուգելն ու հիմնական սռնակալների գննությունը | 20 | 3—30 | — | — | — | Յուրաքանչյուր 120 ժամից հետո սռնակալները ձգվում են, յեթե անգամ չխկոց (стук) չի հայտնաբերված: Շարժաթևային սռնակալները, իբրև կանոն, ձգում են շրջիկ մեխանիկը, հակառակ պարագային՝ համապատասխան կերպով սարքավորված շրջիկ արհեստանոցի փորձված փականագործը: Յեթե ՄՏԿ-ում կամ խորտընտեսության մեջ յեղած շրջիկ արհեստանոցները ամբողջ տրակտորային պարկի սպասարկմանը չեն բավարարում, այդ դեպքում սռնակալները դաշտում ձգելը թույլ է տրրվում իբրև բացառություն, և այն էլ միմիայն այն դեպքում յեթե ամենամոտիկ կոլտնտեսությունը վորտեղ կարելի յե փակ շենք գտնել, գտնվում է հեռու, այդ դեպքում անպայման պետք է պահպանել պայմանները. քանդված տրակտորը պետք է փոշուց պաշտպանել քամու առաջ հետևյալ վորևէ պաշտպանողական հարմարանք պատրաստելով, տրակտորի տակը պետք է բրեզենտ փռել կամ փայտից պատրաստած ցամքար (настил) դնել: |
| 2. Առաջին անիվների առլիկավոր սռնակալները լվանալը, նրանց կանոնավորելն ու յուղելը: . . . . . | 5 | 10 | 10 | — | — | |
| 3. Շարժիչի կարտերը, յուղի պոմպի ֆիլտրը, յուղանցքները նավթով լվանալը և յուղ տալը: . . . . . | — | — | 25 | — | — | |
| **Ընդամենը** . . . | 25 | 3—40 | 35 | — | — | |

Տրակտորի պարապուրդ 3 ժամ 40 րոպե:

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԽՆԱՄՔ № 5

**Յուրաքանչյուր 240 ժամից հետո կատարվում է շրջանային կամ համապատասխան կերպով սարքավորված օջախի արհեստանոցներում (կատարվում է հանգստի օրերին):**

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Ծառեցման սիստեմը ջրով լվանալը . | — | — | 20 | — | — | Նախատեսնվում է գլխիկը հանել և խփականների ազատել: |
| 2. Գլանների գլխի, մխոցների առվակների, մխոցների և խփանների կամերների ալյուսը (нагар) մաքրելը | — | 1 | 1—10 | — | — | |
| 3. Մխոցի վերին սեղմիչ օղակը Компрессионные кольцы փոխելն ու առվակները մաքրելը . . . . | — | 20 | — | 209 | 4 | Տրակտորի հաջորդ 240 ժամ աշխատանքից հետո 1-ին և 3-րդ օղակները միմիանց տեղն են փոխվում: |

| ՈՊԵՐԱՑԻԱՆԵՐԻ ԱՆՈՒՆԸ | Խնամքի համար պահանջվող ժամանակը (օրինակելի): Մեխանիկ | Խնամքի համար պահանջվող ժամանակը (օրինակելի): Փականագործ | Խնամքի համար պահանջվող ժամանակը (օրինակելի): Տրակտորիստ | Պահանջվող պահեստի մասեր: № ըստ կատալոգի | Պահանջվող պահեստի մասեր: Քանակը | ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 4. Մխոցային մասի և շարժաթևի գլխի վռանի վճռակն ստուգելը . . . | 5 | 15 | 5 | — | — | |
| 5. Խփանները հղկելն ու արանքները կանոնավորելը . . . . . . . . | 5 | 45 | 1—55 | — | — | Հիշյալ ժամանակի մեջ մտցված է խփանի խփանային մեխանիզմը հավաքելն ու գլխիկը դնելը: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 6 Սնման սիստեմը զննելը . . . . . | — | 30 | 15 | — | — |
| 7. Ընդհատիչի կոնտակտները մաքրելն ու կանոնավորելը, կոլեկտորն ու բաշխիչը մաքրելը։ Մագնետոյի և հարթակի (площадка) միացման ըստուգումը . . . . . . . . . . . | 15 | 5 | — | — | — |
| 8. Կցման ագույցը և ճկուն շլանգի վիճակն ստուգելն ու կանոնավորելը . . . . . . . . . . . . | — | 5 | 5 | — | — |
| 9. Ջրատանցման ռետինե շլանգի վիճակն ստուգելը։ . . . . . . | — | — | 2 | — | — |
| **Ընդամենը** . . . | 25 | 3—10 | 4—12 | — | — |

*ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Մոմերի սռնիկները փոխում են տրակտորի 480, 1440 ժամ աշխատանքից հետո կոմպլեկտային մոմերը՝ 960, 1920 ժամ աշխատանքից հետո, մագնետոյի քանդելու հետ կապված բոլոր օպերացիաները կատարում են վորակյալ մեխանիկները ցեխից ու կեղտից պաշտպանված շենքում։*

# № 6 ՏՐԱԿՏՈՐՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՄԱՆ ՈՊԵՐԱՑԻԱՆԵՐԻ ՈՐԻՆԱԿԵԼԻ ՑԱՆՔԸ

*(Յուրաքանչյուր 600 ժամվա աշխատանքից հետո)*

*Կատարվում է խորտնտեսություններում կամ ՄՏԿ-ների յենթաշրջանային արհեստանոցներում։ Տրակտորները արհեստանոցներից 10 կիլոմետր տարածությունից ավելի հեռու լինելու դեպքում ընթացիկ նորոգումը կատարվում է հատուկ սարքավորված շրջիկ արհեստանոցներում։*

| ՈՊԵՐԱՑԻԱՆԵՐԻ ԱՆՈՒՆԸ | Մնամքի համար պահանջվող ժամանակը (օրինակելի) | | | Պահանջվող պահեստի մասերը | | ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ |
|---|---|---|---|---|---|---|
| | Մեխանիկ | Փականագործ | Տրակտորիստ | № ըստ կատալոգի | Քանակը | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 1. Տրակտորն արտաքուստ մաքրելը | — | — | 25 | — | — | |
| 2. Սառեցման սիստեմի միջի նստվածքները հեռացնելը և լվանալը . . | — | — | 30 | — | — | |
| 3. Գլանների գլխիկի, մխոցային օղակների, խփանների, խփանային կամերի այրուքը մաքրելը և գլանների գլխիկի արանքադիրի վիճակն ստուգելը։ . . . . . . . | — | 1 | 1—10 | 209 | 12 | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 4. Մաշված սեղմիչ օղակները փոխելը, մաշված առվակներն ուղղելը և բոց բարձրության մեջ ածված օղակները գնելը . . . . . . . . . . . | — | 1—30 | 30 | — | — | |
| 5. Միջուկի մատի վիճակին ստուգելն ու անհրաժեշտության դեպքում նրան փոխելը և շարժաթևի վերի գլխիկի վրանը համարեցնելը . . . | — | 2 | — | 211<br>212<br>610<br>5250<br>203 | 4<br>4<br>4<br>4<br>4 | Մեծացված մասը գնելիս վրանը լայնանում է: |
| 6. Ծնկաձև առանցքի ելքաձև լինելն ստուգելը, հիմնական առնակալների գնումյունը . . . . . . . . | 10 | 25 | — | — | — | |
| 7. Շարժաթևային առնակալները ձգելը, պահպանակների դրվածքը և բարեւ-տի վիճակի ստուգելը, առնարանները, յուղի առվակները լցված քնեւ-րից մաքրելը շարժաթևային գրնտերիթների և մանեկների (гайка) վիճակն ստուգելը | 20 | 3—30 | — | 5210 | 16 | Անհրաժեշտության դեպքում պահպանակները փոխում են: |
| 8. Թիթանները լվանալը և արանքները գնելն ու կանոնավորելը . . . . | 05 | 45 | 1—55 | — | — | |
| 9. Կանոնավորիչի (регулятор) զսպանակի վիճակն ստուգելը և անհրաժեշտության դեպքում նրան փոխելը: . . . . . . . . . . . . | | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 10. Սամերի, լարերի, և լամպարիկների (лампочка) վիճակի ստուգումը . | — | 08 | — | — | — | |
| 11. Կարբյուրատորը մաքրելը, լողաններն (поплавок) ու ասեղնավոր խցափանները ստուգելը . . . . . . | — | 30 | 15 | — | — | |
| 12. Վառելանյութի ամանները (бак) լվանալը . . . . . . . . . . . . . | — | — | 30 | — | — | |
| 13. Վառելանյութի նստվածքի անոթի (остойник) ֆիլտրները գնելն լվանալը . . . . . . . . . . . . . | — | — | 05 | — | — | |
| 14. Յուղատար սիստեմը նավթով լվանալը և ապա յուղ լցնելը . . . . | — | 02 | 15 | - | — | |
| 15. Շարժիչի կարտերը և յուղի պոմպի ֆիլտրը նավթով լվանալը . — . | — | — | 20 | — | — | |
| 16. Շարժիչի կարտերի և արգդու-թյունների սուփի մեջի յուղը փոխելը . . . . . . . . . . . . . | — | — | 20 | — | — | Արգդությունների չափի մեջ մնացած փոշի կամ կեղտ հայտնաբերելիս յուղը բաց թողնել, սուփը լվանալ և նոր յուղ լցնել: |
| 17. Օդամաքրիչի ֆիլտրը լվանալը, կարբյուրատորի հետ նրան միացման պնդության ստուգելը և յուղը փոխելը . . . . . . . . . . . . . | — | — | 22 | — | — | |
| 18. Ընդհատիչի կոնտակտները մաքրելն ու կանոնավորելը, կոլեկտորը և բաշխիչը մաքրելը: . . . . . . . | 15 | 05 | — | — | — | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 19. Կցման ագույցը և ճկուն շլանգի վիճակն ստուգելն ու կանոնավորելը կցման ագույցի սռնակի շլեյֆները գննելը . . . . . . . . . . | — | 15 | 15 | — | — |
| 20. Ջրասառեցման ռետինե շլանգն ստուգելը . . . . . . . . . . | — | — | 02 | — | — |
| 21. Ոդափոխիչը քանդելն ու լվանալը և քամհարի փոկը փոխելը . . . . | — | — | 25 | — | — |
| 22. Ծոցեր անիվների ռոլիկավոր առանցքակալները լվանալը, նրանց կանոնավորելն ու յուղելը . . . . . . . | —05 | 10 | 50 | — | — |
| 23. Յետևի կիսառանցքի կոնաձև ռոլիկավոր առանցքակալները կանոնավորելը | —08 | 30 | 1 | | — |
| 24. Ղեկավարման (рулевое управление) մեխանիզմի վորդնակային հաղորդման և քարշի կանոնավորումն ստուգելն ու կարգավորելը . . . | — | 20 | 25 | | — |
| 25. Տրակտորի բոլոր մեխանիզմները յուղելը՝ համաձայն գործարանային հրահանգի։ . . . . . . . . . . | — | — | 35 | | |
| 26. Տրակտորի արտաքին բոլոր ամրությունների ստուգելը և թեքերն համապատասխանեցնելը . . . . . . | — | — | 15 | | |



| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 27. Կարտերի պատարկող խցանները, արագությունների տուփը, դիֆերենցիալը, ստուգիչ յուղածորակները և մանոմետրը ստուգելը։ . . | — | — | 02 | — | — |
| 28. Տրակտորի մեջ վառելանյութ և ջուր լցնելը։ . . . . . . . . | — | — | 15 | — | — |
| 29. Շարժիչը գործի գցելը, տրակտորի ընդհանուր զննությունը, մասերը թեքելն ու կանոնավորելը . . . . . | 15 | — | 05 | — | — |
| **Ընդամենը** . . . | 1—18 | 11—28 | 10—46 | | — |

Տրակտորի պարապուրդ 11 ժամ 48 րոպե, (որի մեջ 11 ժամ 28 րոպե փականագործի աշխատանքը և 15 րոպե մեխանիկի աշխատանքը)։

# ՏՐԱԿՏՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿ ՆՈՐՈԳՄԱՆ ՕՊԵՐԱՑԻԱՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՑԱՆԿԸ (ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ 1200 ԺԱՄՎԱ ԱՇԽԱՏԱՆՔԻՑ ՀԵՏՈ)

| № ըստ կարգի | ՕՊԵՐԱՑԻԱՆԵՐԻ ԱՆՈՒՆԸ | Պահանջվող պահեստի մասերը | | ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ |
|---|---|---|---|---|
| | | № ըստ կատալոգի | Քանակը | |
| | **Կատարվում է խորհտնտեսությունների յեվ ՄՏԿ-երի կենտրոնական արհեստանոցներում** | | | Լուծայքը լցվում է նորոգման նախօրյակին |
| 1. | Տրակտորն արտաքուստ մաքրելն ու լվանալը | | | |
| 2. | Սառեցման սիստեմից նստվածքը հեռացնելը, ռադիատորը քանդելը լվանալը յեվ մաքրելը | | | |
| 3. | Շարժիչը ամբողջովին քանդելը յեվ մաքրելը (այսուքը հեռացնելը), շարժիչը, միացման ագույցը նավթով լվանալը յեվ թերությունների տեղեկագիր կազմելը . . . | | | |
| 4. | Ծնկաձև առանցքի նիփսը ստուգելն յեվ վերացնելը: . . . . . . . . | | | |
| 5. | Մխոցային մասը յեվ շարժաթևի վերին գլխիկների վառները փոխելը հարմարեցնելով մխոցի մատին: . . . . . . | 211<br>203<br>212<br>5250<br>6100<br>169<br>170 | 4 հատ<br>4 »<br>4 »<br>4 »<br>4 »<br>4 »<br>4 » | |
| 6. | Հին բաժակները (гильза) հանելը, հղկվածները կամ նորերը մամլելը, անհրաժեշտության դեպքում փոխելը . . . . . | | | |
| 7. | Շարժաթևային առանցքների պահպանակները (կոմպլեկտ) լցնելը . . . . . | | | |
| 8. | Պահպանակները շտկելը (расточка) | | | |



| № ըստ կարգի | ՕՊԵՐԱՑԻԱՆԵՐԻ ԱՆՈՒՆԸ | № ըստ կատալոգի | Քանակը | ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ |
|---|---|---|---|---|
| 9. | Շարժաթևերը ստուգելն ու ուղղելը . . | | | |
| 10. | Սառնարաններն ու յուղի ավյակները ուղղելը . . . . . . . . | | | |
| 11. | Առանցքակալները շաբերով ուղղելը (шабровка), պրիժիգ . . . . . . . | | | |
| 12. | Կանոնավորիչի առանցքի վռանը փոխելը | 382 | 1 հատ | |
| 13. | Շարժիչն ամբողջովին հավաքելը. նոր կոմպլեկտ մխոցներ դնելը յեվ գլանների գլխիկի արանքագիրները, արտածող յեվ ներածող խողովակները փոխելը . . . . | 272<br>304<br>208<br>209<br>210<br>206<br>207<br>5210 | 1 »<br>1 »<br>4 »<br>12 »<br>4 »<br>8 »<br><br>16 » | |
| 14. | Ցուղատար սիստեմը նավթով լվանալը յեվ յուղի պոմպի ցանցը մաքրելը . . . | | | |
| 15. | Խփանների յեզրերը (фаска) շտկելը . | | | |
| 16. | Խփանների բները ուղղելը (расшировка) | | | |
| 17. | Խփանները ուղղել (притирка) . . . | | | |
| 18. | Կանոնավորիչը հաստելը (установить) | | | |
| 19. | Կարբյուրատորն ու օդամաքրիչը զննելը, մաքրելը, հավաքելն ու տեղը դնելը . . . | | | |
| 20. | Քամհարի առանցքը յեվ մաշված առանցքակալները փոխելը: Հավաքելը, տեղը դնելն ու փոկը փոխելը . . . . . . . . . . | 453<br>457<br>461 | 1 հատ<br>1 »<br>1 » | |
| 21. | Դինամոն յեվ մագնետոն զննելը, մաքրելը յեվ կանոնավորելը . . . . . . . . | | | |
| 22. | Մագնետոն յեվ լարերը հաստելը . . . | | | |
| 23. | Ղեկավարման քարշերը հաստելը ու ստուգելը, կայծարկման սիստեմն ու դրսաակյն ստուգելը . . . . . . . . . . . . | | | |
| 24. | Կցման ագույցի ֆերրադոն ստուգելը յեվ անհրաժեշտության դեպքում նրան փոխելը . . . . . . . . . . . . . . | 425<br>10501 | 1 հատ<br>36 » | |
| 25. | Կցման ագույցը հավաքելը, տեղը դնելը, միացման դետալները փոխելն ու կանոնավորելը յեվ կցման ագույցի վոտնատեղի (педаль) կոճիկը ստուգելը . . . . . | 447<br>447<br>448 | 6 հատ<br>1 »<br>1 » | |

| | | | |
|---|---|---|---|
| 26. | Արագությունների տուփն ու դիֆերենցիալը նավթով լվանալն ու ստուգելը (առանց քանդելու), ատամնավոր անիվների յեվ առանցքների վրայի քերուկը մաքրելը | 3100 | 1 հատ |
| 27. | Արագությունների տուփի միջին առանցքի ռոլիկավոր առանցակալների վիճակն ստուգելը . . . . . . . . . . . . . . | | |
| 28. | Արագությունների տուփի ցածի յեվ տրանսմիսիայի լայնակի (поперечный) առանցքներն ստուգելն ու կանոնավորելը | | |
| 29. | Յետեվի կիսասռնու կոնաձեվ ռոլիկավոր առանցակալները լվանալն ու կանոնավորելը . . . . . . . . . . . . . . | | |
| 30. | Ղեկավարման սիստեմի վորդնակի հազրգումը ստուգելն ու կանոնավորելը . . | | |
| 31. | Առջեվի անիվների ռոլիկավոր առանցակալները լվանալը, կանոնավորելն ու յուղելը | | |
| 32. | Խլացուցիչի ցանցի վիճակն ստուգելը . | 533 ա. | 1 հատ |
| 33. | Տրակտորի թեվերի նորոգումը . . . . | | |
| 34. | Վառելանյութի անոթ լվանալը . . . . | | |
| 35. | Տրակտորի մեջ լրիվ կերպով վառելանյութ, ջուր յեվ յուղ լցնելը յեվ տրակտորը յուղելը . . . . . . . . . . . . | | |
| 36. | Յուղի մանոմետրը ստուգելը . . . . | | |
| 37. | Տրակտորի ընդհանուր զննությունը, գործի գցելը, կանոնավորելն ու փորձնական աշխատացնելը (обкатка) | | |

Միջակ նորոգման մեջ յեղած տրակտորի ընդհանուր պարապուրդը 48 ժամից չի անցնում (3 բանվորական որ):

# ՎՈՐՈՇՈՒՄ № 137

## ԽՍՀՄ-Ի ՀՈՂԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ ՅԵՎ ԽՍՀՄ-Ի ՀԱՑԱՀԱՏԻԿԱՅԻՆ ՈՒ ԱՆԱՍՆԱՊԱՀԱԿԱՆ ԽՈՐՀ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ

*21 փետրվարի 1933թ.*

**Տրակտորների նորոգման տեսակների մասին**

*Տրակտորների նորոգման տեսակները վորոշվում են հետեվյալ ցուցանիշների ամբողջականության հիման վրա:*

*1. Նախորդ հիմնական վերանորոգումից կամ գործարանից դուրս գալու մոմենտից սկսած՝ տրակտորի փաստորեն աշխատած ժամերի քանակը:*

*2. Նորոգման ոպերացիաների անվանացանկը (նոմենկլատուրան):*

*3. Փոխելու յենթակա պահեստի մասերի արժեքը:*

*Յելնելով վերոհիշյալից, սահմանվում են նորոգման այս կամ այն տեսակին վերաբերող հետեվյալ ցուցանիշները:*

## ՀԻՄՆԱԿԱՆ ՆՈՐՈԳՈՒՄ

§ *1. Տրակտորն աշխատել է մխոցային* (поршневой) *խմբի, ծնկաձև ու բաշխիչ առանցքների տրանսմիսիայի և ընթացամասի հիմնական մասերի ծառայության ու նորմալ աշխատանքի ժամկետներից*

ավելի, որ հետևյալ տրակտորների համար կազմում է

ՖՊ և ֆորդզոն ———————— 1800ժ։

Այլ անիվավոր տրակտորներ ———————— 2400ժ։

Թրթրաձև » » » » ———————— 3000ժ։

§ 2. Նորոգումը կապված է տրակտորն ամբողջովին քանդելու և հետևյալ հիմնական մասերն ու մեխանիզմները նորոգելու, վերականգնելու կամ փոխելու հետ։

1. ա) ՇԱՐԺԻՉԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ա) Գլանները (цилиндр) հղկելը բաժակները (гильза) հղկելը կամ փոխելը)։

բ) Մխոցը (порıень) փոխելը (կոմպլեկտը) կամ նրա վերականգնելը

գ) Արտածող խփանները (клапан) փոխելը և ներածողների վոչ լրիվ փոխելը։

դ) Վռանների (втулка) և խփանների հրիչները փոխելը կամ նորոգելը։

յե) Ծնկաձև առանցքի փոխելը կամ հղկելը

զ) Առանցքի գնդակավոր սռնակողները (потшипник) փոխելը։

ը) Հիմնական և շարժաթևային սռնակալները լցնելն ու հղկելը։

թ) Բաշխիչ առանցքի ստուգումը, նոր վռանները (սռնակալները) մաշելը և բաշխիչ ատամնավոր անիվները փոխելը։

ժ.) Ռադիատորը փոխելը կամ նորոգելը։

ի.) Պոմպը և քամհարը (вснтилятор) նորոգելը կամ փոխելը։

լ.) Յուղելու և վառելանյութի սնման սիստեմ ստուգելն ու նորոգելը.



խ) Մագնետոն, գենամոն և լուսավորությունը նորոգելը. բաբինները, մագնետոյի կոճերը (катушка) փոխելը կամ նրան վերափաթաթել (ՖՊ, մաս № 300)։

2. ՏՐԱՆՍՄԻՍԻԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ա) Ագույցի (муфта) սկավառակները (диск). զսպանակները, ֆերրադոն փոխելը և ագույցի թաթուկը նորոգելը.

բ) Մաշված ատամնավոր անիվները, սռնակալները, տրանսմիսիայի առանցքների և կիսա սռնակալների փոխելն ու վերականգնելը և տրանսմիսիայի կանոնավորելը։

գ) Դիֆերենցիալի խաչմերուկի (крестовнна) արբանյակները (саттелит) փոխելը կամ նորոգելը։

3. ՂԵԿԱՎԱՐՄԱՆ (рулевое управление) ՍԻՍՏԵՄԻ և ԸՆԹԱՑԱՄԱՍԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ա) Ղեկի առանցքի վռանները, ատամնավոր անիվները, վորդնակները, (червяк) մատները (палец) և քարշերը (тяга) նորոգելը կամ փոխելը.

բ) Առջևի անիվների սռնակալները փոխելը, անիվները և սռնակները նորոգելը։

գ.) Դարձյակները (цапфа) նորոգելը և փոխելը։

դ.) Թրթրաձև մեքենաների ընթացամասը նորոգելը՝ սկավառակներն ու թմբուկներ փոխելով, ֆերբատոն, գնդավոր սռնակալները փոխելով, թրթրաձև ժապավենի վռանները վերամաշելով և այլն։

Բացի դրանից, հիմնական նորոգում կատարելիս տրակտորները ներկվում են։

3. Փոխելու յենթակա պահեստի մասերի արժեքը 1 քարշի (на крюке) ուժի համար 25 ռուբլուց (արդ-

յունաբերության գներով) պակաս չպետք է լինի (միջին հաշվով):

## ՄԻՋԱԿ ՆՈՐՈԳՈՒՄ

§ 1. Տրակտորն աշխատել է միջացային խմբի նորմալ ծառայության և աշխատանքի ժամկետներից ավելի, որը հետևյալ տրակտորների համար կազմում է ՑՊ ——— 900 ժ.

Մնացած բոլոր անիվավոր տրակտորների համար ——— 1200 »

Թրթրաձև տրակտորների համար ——— 1500

§ 2. Տրակտորի նորոգումը զուգորդված է շարժիչն ամբողջովին քանդելու և տրանսմիսիայի առանձին հանգույցները և ընթացամասը մասնակիորեն քանդելու հետ:

ա) Մխոցները և բաժակներ նորոգելը փոխելը կամ նրանց հղկելը, արտաձող խփանների մասնակիորեն փոխելը. ծնկաձև առանցքի պարանոցներն ստուգելը կամ նորոգելը, շարժաթևային սռնակալները, լցնելը և հղկելը կափույրների յուղերն (фаска) ու բները հղկելը. սառեցնելու, յուղելու, վառելանյութի և էլեքտրասարքավորման սիստեմի ստուգելն ու լվանալը:

բ) Ցեռնի կամրջակն ու ղեկավարման սիստեմն ստուգելը (առանց կամրջակը մանրամասն քանդելու), նրանց կանոնավորելով անհրաժեշտության դեպքում փոխելով նաև տրանսմիսիայի սռնակալները:

գ) Կցման ագրեգատի մասերը զննելն ու լվանալը, նրան կանոնավորելն ու սկավառակները մասնակիորեն փոխելը (Փ. Գ.-ի)=



դ) Ղեկավարման սիստեմի մաշված վռանները փոխելը:

§ 3. Փոխելու ենթակա պահեստի մասերի արժեքը նորմալ պայմաններում 1 քարշի ուժի համար կազմում է 10—15 ռուբլի=

## ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՈՒՄ

Տրակտորի ընթացիկ նորոգում անելով պետք է հասկանալ պլանային նախազգուշական նորոգման համար մշակված կանոնների համաձայն՝ առանձին մասերը զննելը, մաքրելը, ստուգելը, կանոնավորելը, նորոգելը կամ փոխելը՝ առանց մանրամասն կերպով քանդելու=

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1. «Հիմնական նորոգում» և «միջակ նորոգում» կոչված հատվածների կետերում մատնանշված օպերացիաները հանդիսանում են իբրև հիմնական նորոգիչ օպերացիաներ, որոնց զուգընթաց կատարվում են նաև յերկրորդական օպերացիաներ:

2. Տրակտորի՝ նորոգման այս կամ այն տեսակին պատկանելը վորոշվում է նախապես կազմված դեֆեկտների տեղեկագրի հիման վրա և տրակտորի պասպորտների տվյալներով: Գլխավորապես պետք է ուշադրության առնվի պահանջված նորոգման օպերացիաների անվանացանկը

(«Հիմնական նորոգում» § 2, կետեր 1 և 2 և «Միջակ նորոգում» § 2),

Վերոհիշյալ անվանացանկից շեղվելու դեպքում նորոգման այս կամ այն տեսակին պատկանելը պետք է վորոշվի միացած յերկու ցուցանիշների ամբողջականության հիման վրա:

**Խ.Ս.Հ.Մ.-ի Հողժողկոմի տեղակալ ԳՈԼԵՆԿՈ**
**Խ.Ս.Հ.Մ.-ի Հացահատիկային յեվ Անասնապահական ժողկոմատի տեղակալ ՈՍՏՐՈՎՍԿԻ**

6 29(1)
S-93

ՀՀ Ազգային գրադարան
NL0276817

14.515